№ 168 ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3

ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3 № 168

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск. телеф. № 10—56

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենօգրաֆիա։
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

ԿՈՒՐՍԵՐ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԱԾ Է ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.

(առ.) (չ. կ.) 20—6

Сливочная
Карамель
Ирисъ
Т-во Эйнемъ въ Москвѣ
ФАБРМАРКА
ЭЙНЕМЪ МОСКВА
50 Г.

ПЕРВЫЕ ФАБРИКАНТЫ КАРАМЕЛИ „ИРИСЪ" ВЪ РОССІИ.
ОСТЕРЕГАЙТЕСЬ МНОГОЧИСЛЕННЫХЪ ПОДДѢЛОКЪ,
ПОЯВИВШИХСЯ НА РЫНКѢ ПОДЪ РАЗЛИЧНЫМИ НАЗВАНІЯМИ!

(կ. չ.) ա. 16—3

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ

Այն ժամանակ, երբ Թիւրքահայ գաղթականները և պանդուխտները հնարաւորութիւն են ստացել վերադառնալու իրանց հայրենիքը, մենք տեսնում ենք նոր պանդուխտների խմբեր, որոնք Թիւրքահայաստանի գիւղերից գալիս են Կովկաս։

Այդ պանդուխտներին մայր երկրից դէպի Կովկաս քշում են մէկ այն, որ այս տարի հունձը ընդարձակ շրջաններում անբաւարար էր դուրս եկել և միւսն էլ այն, որ մարդիկ շտապել են օգտվելու երթևեկութեան դիւրութիւնից և ժամանակաւորապէս հեռանալու այն երկրից, ուր նրանք վերջին ամիսները տեսան այնքան ծանր հալածանքներ և զրկանքներ։

Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Թիւրքահայաստանի մեծագոյն մասում տարվայ բերքը այս տարի նպաստաւորներից չէ, իսկ մի քանի շրջաններում չափազանց աղքատ է։

Այնտեղ, ուր եղել են աշնանացան արտեր, ստացվել է լաւ բերք, որովհետև ձմեռվայ ձիւնը և գարնան առատ անձրևները հնարաւորութիւն են տուել բոյսերին զարգանալու։ Նոյն այդ պատճառով աջող է աճել և մարգագետինների բուսականութիւնը։ Իսկ այն բոլոր տեղերը, ուր գլխաւորապէս գարնանացան է սերմանվում և ուր բոյսերի աճումը կատարվում է ամառվայ ընթացքում, արմտիների զարգացումը կանգ է առել անձրևների սակաւութեան պատճառով և շատ շրջաններում այլևս այս տարի չի կազդուրվի զգալի կերպով։

Թիւրքահայ պանդուխտները ամեն տարի գալիս են աշխատանքի դէպի մեր երկիրը։ Երբ տարին բերքի է և տան պաշարները մեծ են, նրանք մնում են տանը աւելի երկար ժամանակ, իսկ յետոյ տեղափոխվում են դէպի քաղաքները լրացուցիչ աշխատանքներ ճարելու նպատակով։

Այժմ, երբ ճանապարհները բացվել են դէպի մայր հայրենիք, անշուշտ, շատ պանդուխտներ կը շտապեն հայրենիք իրանց հարազատ օջախը տեսնելու և սրտի կարօտները յագեցնելու, բայց գնացողների մի մասը կը վերադառնայ, որպէսզի կողմնակի աշխատանքներով կարող լինի ապահովել իր բազմաթիւ կարիքները։

Թիւրքահայ պանդուխտները յամենայն դէպս պէտք է այժմեանից հոգատար լինեն, որ թէ առաջիկայ աշնան և թէ գալ գարնան նրանք բաւականաչափ սերմացու ունենան իրանց ձեռքին անհրաժեշտ գործիքների հետ միասին, որպէսզի կարող լինեն մշակել հողերի մեծ տարածութիւններ և հետևեալ տարիներում եռանդուն աշխատանքով զարգացնեն հողի արդիւնաբերութիւնը, որ վերջին ժամանակ թուլացել էր գաղթականութեան և տնտեսական քայքայումների շնորհիւ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կառավարչական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, Աւստրիայում պատրաստութիւններ են տեսնվում անհրաժեշտ դէպքում թիւրքական սահմանագլուխը զօրքեր փոխադրելու համար։

Բուլղարական կառավարչական շրջաններում հաւատացած են, որ Վիէննայի թերթերը չափազանցնում են Բօսնիայում և Հերցեգովինայում սկըսված շարժումը։

Վիէննայում յարուցված շփոթութիւնը պէտք է քօղարկէ Աւստրիայի զինւորական նախապատրաստութիւնների բուն նպատակը, որ վերաբերում է գլխաւորապէս Մակեդոնիային։

Բուլղարական մինիստրների խորհուրդը իր արտակարգ նիստում քննութեան նիւթ է դարձրել թիւրքական անցքերը։

Հաւատարի աղբիւրից հաւատացնում են, որ այն տեղեկութիւնները, որ ստացել է բուլղար կառավարութիւնը, հարկադրում են ի նկատի առնել Թիւրքիայում հակայեղափոխական շարժման բռնկումի հաւանականութիւնը։ Իբրև այդ փոփոխութեանը դիմադրելու համար պատրաստութիւններ են տեսնում Մակեդոնիայի երիտասարդ թիւրքական կոմիտէները ևս։

Բուլղարական զինւորական մինիստրութիւնը, ի նկատի առնելով թիւրքական անցքերի առիթով ստացվող լուրերի յուզիչ բնաւորութիւն ունենալը, շարունակում է ընդարձակ պատրաստութիւններ տեսնել։ («Б. В»)

—

Թէհրանից հեռագրում են «Баку» լրագրին, որ ռուսաց դեսպան Հարդվիգը համոզում էր շահին յայտարարել մէջլիսը հրաւիրելու օրը։

Շահի նախագահութեամբ տեղի ունեցած աղմկալի խորհրդակցութեան ժամանակ մեծամասնութիւնը առաջարկել է հրաւիրել խորհուրդ քաղաքների և արհեստակցական միութիւնների ներկայացուցիչներից։

Շահը խորհրդակցութիւնից յետոյ պատասխանել է դեսպան Հարդվիգին, որ մէջլիսը կը գումարվի նոյեմբերի 1-ին (ն. տ.)։ Միաժամանակ հրաւիրելու է բարձրագոյն խորհուրդ խոշոր քաղաքների կողմից ընտրված ներկայացուցիչներից բաղկացած։ Խորհրդի անդամների կէսը կը նշանակվի շահի կողմից։

—

Լոնդոն 1 օգոստոսի

«Evening» և «Standard» թերթերի Հօնգկօնգից ստացած տեղեկութիւնների համաձայն, չինական իշխանութիւնները Չինշան նաւահանգստում գրաւել են 10,000 հրացաններ և 2,000,000 փամփուշտ։ Ճապօնական առևտրականները բողոքել և պահանջել են վերադարձնել գրաւվածը։ («Հ. Գ.»)

—

Պեատիգորսկ, 1 օգոստոսի

Ջրերի վարչութեան գանձարկղից կեղծ բանալիի օգնութեամբ գողացված է 22,000 րուբլի։ Դրամատարը և գանձապահը փախել են։ («Հ. Գ.»)

—

Ռոստով Դ./Վ., 1 օգոստոսի

Նախիջևան և Կիզլտէրինկա կայարանների միջև գնացքի խորտակվելու ժամանակ սպանվել է 1-ը, ծանր վիրաւորվել են 6 հոգի։ Պատճառը շոգեմեքենայի տակ եզան ընկնելն է եղել։ («Հ. Գ.»)

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

—

Լոնդոն, 1 օգոստոսի

«Morning Post»-ը հրատարակել է Մակեդոնիայի վերաբերութեամբ ռուսական նօտայի լիակատար բնագիրը։ Լրագրի կարծիքով, նօտան պարզ կերպով ցոյց է տալիս, թէ եւրոպական համերգը ինչ վերաբերմունք ունի դէպի մակեդոնական բարենորոգումների իրականացումը կանգնեցնելու հարցը։

Ապա լրագիրը ասում է. «Ռուսաստանի գործելակերպը հաւանելու հարցում Եւրոպան չէ հրաժարվում վիլայէթների նկատմամբ ունեցած պատասխանատուութիւնից, բայց և մենք պէտք է ուժեղ համակրանք զգանք դէպի Թիւրքիան, և նրա առաջիկայ գործում պէտք է որ ապահովենք նրա հայրենասէր-վերանորոգիչներին մեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

(Սեփական թղթակցի.)

I

Կ. Պոլիս, 25 յուլիսի

Երէկ այցելեցի նորընտիր պատրիարքական տեղապահ Եղիշէ եպ. Դուրեանին։ Սրբազանն իմ ուղեկիցներին և ինձ ընդունեց պատրիարքարանի աշխատութեան գրասենեակում, ուր պարապվում էր գրասեղանի վրա բազմաթիւ թղթակցութիւնների մէջ ընկղմված։ Ներկայացրի ուղեկիցներիս. փոխ-գնդապետ Պ. Բէժանբէկ և պրօկուրորի օգնական Լ. Եւանգուլեան։

Դուրեան սրբ. մեզ ընդունեց սիրով։ Նրա մօրուքն և մազերը սպիտակախառն են, ինքը երկար հասակ է և առողջ։ Խօսում է ծանր, մտածելով և աշխատում է խօսել այն, ինչ որ իրօք հարկաւոր է իր միտքը ճիշտ բացատրելու համար. Ճոռոմաբանութիւն և աւելորդաբանութիւն չունի խօսակցութեան մէջ, բայց քարոզը, գոնէ այն՝ ինչ որ ես կարդացի լրագիրներում մանրամասն առաջ բերված, թոյլ և վերացական է։ Խօսում ենք մօտ կէս ժամ։ Իմ հարցումներին պատասխանելով նա յայտնում է, թէ հայերը պէտք է գոհ մնան այն ազատութիւնով, որ այժմ ձեռք է բերված օսմանեան սահմանադրութեամբ և անիրագործելի ձգտումների չը դիմեն։ Ինքը դեռ բոլորովին վստահ չէ երևում սահմանադրութեան հաստատուն ապագայի մասին, բայց ամեն միջոց պիտի գործ դնէ ապահովելու համար, որ իր ժողովուրդը լիապէս օգտվի ներկայ հանգամանքներից։ Արդէն շրջաբերականներ է ուղարկել ամեն կողմ, որ նոր երեսփոխանական ընտրութիւններ կատարվեն ըստ ազգային սահմանադրութեան, նոր ազգային ժողով գումարելու համար, որի զբաղմունքի առարկաներն են լինելու 1) Նոր պատրիարքի ընտրութիւնը, 2) կրօնական և քաղաքական ժողովների ընտրութիւնը և 3) կաթողիկոսական հարցը։ Հարցնում եմ Օրմանեանի պաշտօնավարութեան պարագաների մասին։ Դուրեան սրբ. պատասխանում է, թէ Օրմանեան ճիշտ է որ մի քանի անգամ բողոքներ է ներկայացրել կառավարութեանը հայերի կրած տառապանքների մասին և մի անգամ էլ իր հրաժարականն է տուել, բայց դրանք աւելի ձևական բնաւորութիւն են կրել, որովհետև ինքը չէ հետապնդել և երբ Բ. Դուռը նրա հրաժարականը վերադարձրել էր առանց նրա պահանջները կատարելու, նա լռելեայն համակերպել է դրա հետ և վերադարձել պատրիարքարան։ Նրա մէջ նկատվում էր փառասիրական ձգտում պատրիարքական իշխանութիւնը իր անձի վրա պահելու։ Դէպքեր առհասարակ շատ կային, որոնք առաջին յարմար առիթից օգուտ քաղեցին նրան տապալելու համար։ Ժողովրդական այս բողոքի վրա ազգ. վարչութեան ատենապետ Գաբրիէլ Նորատունկեան (այժմ մինիստր) պնդեց, որ Օրմանեան իր հրաժարականը տայ, և նա գրաւոր և բերանացի տուեց իր հրաժարականը։

Հարցնում եմ հայ բանտարկեալների ազատութեան մասին։ Դուրեան պատասխանում է, թէ ինքը շրջաբերական հեռագիրներով յայտնել է ամեն կողմ ընդհանուր ներման մասին և առաջարկել է, որ առաջնորդներն իրան հեռագրեն, թէ կատարվա՞ծ է ամեն տեղ այս կայսերական հրամանը։ Իր ստացած տեղեկութիւնների համեմատ դեռ շատ քիչերն են արձակվել բանտից, որի վրա կառավարութիւնը նորից հրաման է ուղարկել, որ անխտիր բոլոր հայ քաղաքական բանտարկեալները ազատվին։ Տեղական թիւրք իշխանութիւնները իբր թէ լաւ չեն հասկացել Կ. Պոլսից ստացված հրամանը... Մինչև հիմա էլ դեռ մեծ մասը չեն ազատվել։

Հարցնում եմ, թէ ինչ միջոցներ են ձեռք առնված Կովկասում ապաստանած հայ գաղթականների վերադարձի համար։ Դուրեան պատասխանում է, թէ ինքը դեռ պաշտօնական թուղթ չէ ստացել իր պաշտօնի հաստատման մասին, այդ պատճառով էլ դեռ որևէ թղթեր չէր կարող գրել, բայց երբ պաշտօնական հաստատութեան թուղթը ստանայ Բ. Դռնից, անմիջապէս այդ հարցի մասին պիտի հոգայ։ (Երէկ երեկոյեան, այն է՝ մեր տեսակցութիւնից մի քանի ժամ յետոյ, սպասված հաստատութեան թուղթը արդէն եկել է Բ. Դռնից պատրիարքարան)։ Ամերիկայում թիւրք հիւպատոսներն արդէն յայտարարել են, թէ գաղթականներն ազատ են վերադառնալու հայրենիք։ Բայց Թիֆլիսում և Բաթումում, առարկեցի ես, թիւրք հիւպատոսները դեռ կարգադրութիւն չունեն։ Առանձնապէս տեղապահ սրբազանի ուշադրութիւնը հրաւիրեցի այս ամենակարևոր հանգամանքի վրա, և նա խոստացաւ իսկոյն միջոցներ ձեռք առնել այդ մասին, որ Կովկասի թիւրքահայ գաղթականների առաջ բացվեն իրանց ծննդավայրի դռները։

Դուրեան սրբազանի մօտ գտնվում էր այդ միջոցին մի երիտասարդ եկեղեցական, որ շարունակ խառնվում էր մեր խօսակցութեան, առանց մեզ ներկայացված լինելու. ընդմիջում էր Դուրեանին, վիճում էր նրա հետ և այլն։ Մենք զարմանում էինք այդ մասին, ի հարկէ առանց դիտողութիւն անելու։ Ի վերջոյ այդ հոգևորականը խնդրեց, որ տեղապահը ներկայացնի նրան, և Դուրեան ներկայացրեց—Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբեան։ Պէտք է խոստովանել, որ այս առաջին տեսութիւնը, գոնէ այսպիսի պարագաներում, աննըպաստ տպաւորութիւն թողեց մեր վրա Մուշեղ եպիսկոպոսի նկատմամբ և պ. Բէժանբէգ առանձնապէս խնդրեց, որ իր անունից յայտնեմ այդ մասին «Մշակի» մէջ։ Մուշեղ եպ. ինձ երևաց խիստ կրակոտ, ջերմ հայրենասէր մի անձ, բայց փոքր ինչ անձնավստահ և ինքնագով, որով փչացնում է ինքն իրան և անհաճոյ տպաւորութիւն է թողնում։

Գալով Դուրեան սրբազանին, մենք բոլորս շատ գոհ սրտով մեկնեցինք նրանից։ Որովհետև իմ ուղեկիցներս պիտի մեկնէին նոյն այդ օրը դէպի Եւրոպա, և ես պիտի մնայի այստեղ, ուստի երկու սրբազաններն էլ ինձ խնդրեցին, որ դարձեալ առիթ ունենանք տեսնվելու, որպէսզի Կովկասից լուրեր տամ նրանց։

Կաթողիկոսական հարցի մասին սրբ. Դուրեան կարծիք չը յայտնեց, բայց Մուշեղ եպ. հաղորդեց, թէ իր և շատերի բաղձանքն էր տեսնել Իզմիրլեանին Էջմիածնի Աթոռի վրա։ Որովհետև լրագիրները լուր էին հաղորդել, թէ Իզմիրլեան պատրաստվում է Կ. Պոլիս գալ, ես հարցրի այդ մասին տեղապահին, որը պատասխանեց, թէ Իզմիրլեան դեռ Երուսաղէմումն է, Ինքը նրանից ուղղակի տեղեկութիւն չունի, բայց յոյս ունի, որ նա իրան ծանր կը պահի և դեռ տեղից չի շարժվի։

II

Նամակս մինչև այստեղ գրելուց յետոյ, այսօր երեկոյեան ժամը 7-ին գնացի Օրմանեանի տուն լսելու համար նրա բացատրութիւնները, որովհետև գայրոյթը նրա դէմ հետզհետէ աւելի է մեծանում։ Նոյն իսկ եկեղեցիների յիշատակարաններն, ուր նրա անունը այս կամ այն ձևի տակ արձանագրված է եղել, ջնջվում են. իր նախկին պաշտպաններն էլ, որոնց թիւը հետզհետէ պակասում է, թէև այն դառնութիւնը չեն ցոյց տալիս՝ ինչ որ հասարակ ժողովուրդը, բայց այնուամենայնիւ մեղադրում են նրան, որ նա, սահմանադրութեան հրատարակումից յետոյ, ամբողջ 4 օր ոչ մի արձագանք չը տուեց ժողովրդեան ցնծութեան, այս առիթով կատարված խրախճաններին և հանդէսներին չը մասնակցեց և նոյնիսկ այն օրն, երբ սահմանադրութիւնը պաշտօնապէս հրատարակվել էր, ինքը նախագահել էր մի հայ վարժարանի հանդէսին, ընդարձակ ճառ էր խօսել և ոչ մի խօսքով չէր ակնարկել կատարված ահագին փոփոխութեան մասին։ Իր պաշտպանները, անշուշտ նրա բերանից լսելով, պատմում էին ինձ, թէ Օրմանեան ուզել էր մեծ խոհեմութիւն գործ դնել, որովհետև կառավարութիւնը ոչ իրեն, ոչ էլ միւս պատրիարքներին պաշտօնապէս չէր հաղորդել սահմանադրութեան հաստատումը, ինչպէս այդ արել էր բոլոր նահանգապետներին և դեսպաններին, ուստի ինքն էլ յունաց պատրիարքի մօտ մարդ ուղարկելով հարցրել էր, թէ նա ինչ էր մտադիր անել։ Յունաց պատրիարքը պատասխանել էր, թէ ինքը խառն ժողով պիտի հրաւիրէ, և ինչպէս ժողովը որոշէ՝ ինքն էլ այդպէս պիտի վարվի։ Օրմանեան էլ այդ խորհրդին հետևելով հրաւէր էր ուղարկել հայոց խառն ժողովի անդամներին, որոնք հաւաքվել էին Ղալաթիայի խորհրդարանը։ Բայց երբ ինքը կառքով գնում է այնտեղ, ժողովուրդը ահագին բազմութեամբ ամբողջ ճանապարհի վրա նրան սուլում է և ապա պահանջում է խառն ժողովից, որ նրան անմիջապէս պատրիարքութիւնից դադարեցնեն։ Խառն ժողովի ատենապետը դուրս է գալիս ժողովրդի մօտ և յայտնում, թէ միայն ազգային ընդհ. ժողովը կարողէ քարոյական աջակցութիւնը, երևան հանենք նրանց վերաբերութեամբ համբերատարութիւն և չառաջադրենք արտակարգ պահանջողութիւն։ Մակեդոնիան չէ կարող բաւարարութիւն ըստանալ մի օրում։ Ոչ միայն վիլայէթների, այլ և եւրոպական խաղաղութեան տեսակէտից պէտք է յուսալ, որ թիւրք վերանորոգչականներին լիակատար հնարաւորութիւն կը տրվի պսակել իրանց այնքան աջող սկսած գործը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 1 օգոստոսի

Թիւրքական «Իգդամ» և եւրոպական թերթերը, և «Ստամբուլ» և «Լէվանդհէրալդ» լրագիրները հրատարակել են իբր թէ երիտասարդ-թիւրքերի կենտրոնական կոմիտէտից բղխող այն թռուցիկը, որ ուղղված է Ռուսաստանի և Ֆրանսիայի դէմ, որոնք իբր որոշել են խանգարել նոր ըէժիմի աջողութիւնը։ Թռուցիկը սպառնում է ռեպրեսիաներ գործ դնել տեղական եւրոպացիների վրա։ Պարզվեց, որ ոչ Սալոնիկի, ոչ Կ. Պոլսի կոմիտէտները թռուցիկներ չեն բաց թողել։ Տեղական կոմիտէտը քննութիւն կատարեց։ Երևաց, որ կարծեցեալ թռուցիկը արտատպութիւն է Պարիզի թիւրքական «Զուրաջիմումենդ» լրագրի յօդուածից։ Կոմիտէտը երեկոյեան բոլոր լրագիրներում հերքում է տպել։ Երիտասարդ-թիւրքերի կոմիտէտները յօդուածներ են գետեղել, որոնցով դատապարտվում է մամուլի մի քանի օրգանների և գաղտնի նպատակների հետամտողների երկմիտ քաղաքականութիւնը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 1 օգոստոսի

Նաում-փաշան նշանակված է դեսպան Պարիզում։ («Հ. Գ.»)

—

Երիտասարդ-թիւրքերը ստորագրութիւն են բաց արել ազգային կրթական ֆօնդ հիմնելու համար։ («Б.»)

—

Լրագիրների ասելով՝ Լօնդօնի հայերը տօնեցին սահմանադրութեան ներմուծումը հանդիսաւոր մաղթանք կատարելով եկեղեցում։ Ներկայ էր թիւրքաց դեսպանը ևս։ Դա մի արտասովոր դէպք էր։ Մաղթանքից յետոյ հայերի մեծ մասը գնաց թիւրքական դեսպանատունը և հաւատարիմ հպատակութեան հաւաստիքը յայտնեց սուլթանին և աւելացրեց, որ այս օրերը նրա կեանքի ամենալաւ օրերն են։ Երեկոյեան տեղի ունեցաւ հայկական բանկետ, որտեղ առաջարկվեցին կենացներ Էդուարդ թագաւորի, սուլթանի, սահմանադրութեան և թիւրք զօրքի համար։ Թիւրքաց դեսպանութեան առաջին խորհրդական Ջէվադ բէյը յոյս յայտնեց, որ Անգլիայի և Թիւրքիայի միջև եղած հին բարեկամութիւնը կրկին կը վերականգնվի, և որ Անգլիան օրինակ կը հանդիսանայ Թիւրքիայի համար, թէ ինչպէս պէտք է լինել ազատ և ուժեղ ու կը համախմբէ բոլոր ազգութիւններն ու դաւանութիւնները առաջադիմութեան և փոխադարձ վստահութեան մի ընդհանուր դրօշի տակ։

—

Բոսֆորի ջրերում յայտնվել է մի խորհրդաւոր զրահաւոր նաւ, որը դրօշակ չէ բարձրացնում։

Անյայտ նաւու այդ յամառ ցանկութիւնը ժողովրդի մէջ մի շարք հակասական հեգնանքներ է ստեղծում։

Պատմում են, որ դա գերմանական զրահանաւերից է, որը սիրալիր կերպով ուղարկել է Վիլհելմ կայսրը իր բարեկամ Աբդիւլ Համիդին այն դէպքի համար, եթէ քաղաքական կռիւը Թիւրքիայի պետի համար տրագիքական բնաւորութիւն ընդունելու լինի և նա ստիպված լինի փախչել Կ. Պոլսից օտար երկրում ապաստան գտնելու համար։

Բայց կայ և դրան հակառակ բացատրութիւն։ Ուրիշները վկայում են, որ այդ զրահանաւը ամենևին գերմանական չէ և ոչ էլ առհասարակ օտարերկրեայ, այլ իրա՝ Թիւրքիայինն է և մօտեցել է Կ. Պոլսին երիտասարդ-թիւրքերի կոմիտէտի գաղտնի կարգադրութեամբ, միանգամայն հակառակ դիտաւորութեամբ՝ արգելք լինելու փադիշահի ամենափոքր փորձին՝ մայրաքաղաքից փախուստ տալու և դրանով էլ իրարանցում և պառակտում սերմանելու։

—

Ներկայ մեծ վէզիր Քեամիլ-փաշան ասաց հետևեալը. «Մենք կամենում ենք լաւ յարաբերութիւններ պահպանել բոլոր պետութիւնների հետ։ Բօլգարիան, Սերբիան և Յունաստանը մտադրութիւն ունէին մեր դէմ դուրս գալ, բայց ներկայ պայմաններում նրանք, անկասկած, հրաժարվեցին այդ մտադրութիւնից։ Եթէ Բօլգարիան կը պնդէ ակտիվ գործողութիւններ անելու մասին մեր դէմ—այդ նշանակում է, որ նրան աջակցում է մեծ պետութիւններից մէկը։ Ես համոզված եմ, որ այդպիսի մի աջակցութիւն կը լինէր միայն բարոյական աջակցութիւն։ Ես հաւատացած եմ, որ պետութիւնների միահամուռ գործելակերպի շնորհիւ ամեն ինչ լաւ կանցնի։ Մենք մինչև այժմ մենակ էինք, որովհետև մեր քաղաքականութիւնը կոռեկտ չէր։ Այդ պատճառով մենք կորցրինք նաև պետութիւնների աջակցութիւնը։ Մենք յոյս ունենք այժմ, որ մեզ կաջողվի ձեռք բերել Ֆրանսիայի, Անգլիայի և Աւստրիայի աջակցութիւնը, ինչպէս որ մինչև այժմ վայելում էինք Գերմանիայինը»։ («Рѣчь»)

—

Սալօնիկից հեռագրում են «Нов. Вр.»-ին. «Ներքին կազմակերպութիւնը յայտարարեց, որ առաջ, ձգտելով ինքնավարութեան, նա աշխատում էր ոչ թէ բաժանել Մակեդօնիան Թիւրքիայից, այլ կռւում էր մղում բօլգարների քաղաքացիական և քաղաքական իրաւունքների համար, որը սեփականութիւն է ամեն մի մարդու. Այժմ ինքնավարութեան սկզբունքը զիջում է Թիւրքիայի միութեան և անբաժանելիութեան սկզբունքին։ Երիտասարդ-Թիւրքերի կազմակերպութեան իդէալներից մէկն այն է, որ պահանջում է ֆրանսիական մեծ յեղափոխութեան բոլոր ազատութիւնները, հաւասարութիւն օրէնքի առաջ բոլոր կրօնների ու ազգութիւնների համար, տեղական յատուկ վարչութիւններ Մակեդօնիայի և Ադրիանուպօլսի վիլայէթներում։ Կենտրօնական կոմիտէտը յայտարարել է, որ ժամանակաւորապէս չետաների և տեղական կոմիտէտների գործողութիւնները ընդհատվում են, սպասելով սահմանադրութեան գործադրութեանը։ Եթէ խոստացված ազատութիւնները մեռած տառ մնան կամ ճնշվելու լինեն ռեակցիայի կողմից կռիւը կը վերսկսվի աւելի կատաղի թափով, քան առաջ էր։ Կոմիտէտը կաշխատի հասնել նպատակին իր սեփական ոյժերով և առանց կողմնակի միջամտութիւնների։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թաւրիզ, 28 յուլիսի

Յուլիսի 26-ի և 27-ի կռիւները նմանները չեն ունեցել։ 26-ի երեկոյեան պարզվեց, որ միապետականները այդ օրը բաւական նեղն են եղել դրած սահմանադրականներին և գրաւել են վերջիններիս մի անգործածելի դարձած թնդանօթը։ Յարձակումը լինելով միապետականների կողմից, բնականաբար կոտորվողների մեծ թիւն էլ սրանցից է լինում։ Երէկվայ կռիւը աւելի արիւնահեղ էր և աջողութիւնը սահմանադրականների կողմը մնաց. այդ առիթով երեկոյեան ժամը 8 ից մինչև 9 ը ամբողջ հակակառավարականների թաղերում մեծ ու փոքր «մուսալլա» էին կանչում (բարձրաձայն աղօթք) ի նշան գոհունակութեան օրվայ աջողութեան առիթով։ Երկու օրվայ կռւում, հաւատացնում են, որ 350—400 մարդ ջարդված կը լինի։

Օր ըստ օրէ, ինչպէս նախընթացով էլ յայտնել եմ, դրութիւնը աւելի սպառնալից, աւելի անապահով է դառնում։ Քարվանսարաները, որոնք համարվում էին ամենաապահով վայրերը, դատարկվում են, ապրանքները փոխադրվում են տները։ Ամբողջ բազարի ապրանքները փոխադրված են տները։ Բազարում անցուդարձը այն աստիճան երկիւղալի է դարձել, որ նոյնիսկ ռուսաց բանկի պաշտօնէութիւնը փոխադրվեց հիւպատոսարան և բանկային գործառնութիւններն այսուհետև հիւպատոսարանում պիտի կատարվեն։

Երէկ բոլորովին անսպասելի բանկի կառավարիչ պ. Բիտուլեվիչը Պետերբուրգից պահանջվածից ճանապարհվեց Ռուսաստան. ենթադրվում է, որ քաղաքական շարժառիթների հետևանք լինի այս մեկնումը... Պ. Բերեզովսկու („Нов. Вр."-ի թղթակից) Թաւրիզ գալուց յետոյ կառավարչի և ռուսաց հիւպատոսի յարաբերութիւնները խիստ լարվեցին. արդեօք պ. Թղթակցի ինտրիգների երկրորդ զոհ չը դարձաւ պ. Բիտուլեվիչը... (առաջինը հայ պաշտօնեան էր, որի մասին «Մշակի» № 156-ում գրած եմ)։ Մօտիկ ապագան ճիշդը կասի մեզ. 26-ին պ. Բերեզովսկին մի յոյն թարգմանի հետ, առանց առաջօրէն լուր տալու, ներկայանում է Սաթթարխանին։ Խօսակցութեան ընթացքում երբ յայտնում է, որ ինքը „Нов. Врем."-ի թղթակիցն է, խիստ անախորժ տրամադրութիւն է ստեղծվում. նամանաւանդ որ ներկաների մէջ է լինում և՝ բարեբաղդաբար թէ դժբաղդաբար՝ «Մօլլա-Նասրէդդին» թերթի թղթակիցը...

Պարզ է, որ ինչ տրամադրութեան տակ հեռացած կը լինի պ. Թղթակիցը, երբ կեանքի մէջ այդպիսի տեսակցութիւնը առաջինը եղած լինէր...

Թնդանօթի պայթած ռումբերի կտորտանքները երէկ ընկան Թիւրքաց հիւպատոսարան։ Մի քանի կտորներ էլ ընկան անգլիական փոխ-հիւպատոսի բնակարանին շատ մօտիկ։ Եթէ կռիւը ներկայ եղանակով շարունակվի, հաւանական է, որ ռումբերը հայ թաղերին ևս բաւական վնասեն։

Կառավարչապետի և սուփահդարի (սպարապետ, զօրաց) ժամանումը վաղուց էլ սպասվում. Թէպէտ սահմանադրականները չեն հաւատում այդ լուրին։

Ամեն ինչ կախումն ունի կառավարչապետի գործելակերպից։ Սաթթար-խանը ասել է, որ եթէ կառավարչապետը ցանկացաւ տեսակցել իր հետ և լսել իր համոզեցուցիչ պատճառաբանութիւնը ներկայ դէպքերի առիթով և պատժել իսկական չարագործներին, որոնք պատճառ դարձան ներկայ սոսկումներին, ինքը պատրաստ է զէնքը ցած դնել և հպատակվել շահին, այլապէս կռիւը նոյն կատաղութեամբ մինչև վերջին շունչը պիտի շարունակի։

Այսօր կրկին յայտարարութիւններ են փակցված Սաթթար խանի և իւզբաշի Բալայի կողմից, որով հրաւիրում են ամենքին հաւատարիմ մնալ սահմանադրութեան և ովքեր կարող են զէնք վերցնեն, խոստանալով զինվածներին ապրուստի հոգացողութիւն և վարձատրութիւն։ Այսօր սահմանադրականների ոգևորութիւնը բուռն է։ Ռուշէիս մի ռուսահպատակ թուրք ներկայացաւ հիւպատոսին մի մեծ պայթած թնդանօթի ռումբի կտորով, պատմեց, որ վնասված է իր տունը, և ընտանիքը հազիւ կարողացել է խուսափել մեծ վտանգից։ Հիւպատոսը խոստացաւ միջոցների դիմել։ Պարսից հեռագիրը չէ գործում, պօստը միայն Ռուսաստանի նամակներն է ընդունում, այն էլ պաշտօնեաներից մէկի տնում։

Ժամը 12-ն է, որ նամակս ուղարկում եմ. դեռ հրացանաձգութիւն չը կայ. բոլոր «Արքեր» ռազմամթերք են փոխադրում Սաթթար-խանի թաղը։

Իբս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի։ Ժանտախտի դէմ մաքառող յանձնաժողովը հաղորդում է, որ Ղըրղըզ դաշտի Մուրանջիկուլ գիւղում յուլիսի 29-ին ժանտախտով հիւանդանալու նոր դէպքեր չեն եղել։ Սկզբում հիւանդացածներից մեռաւ մէկը և մէկն էլ լաւացած է հիւանդանոցում։ Ամբողջ ազգաբնակութեան տրված է հակաժանտախտի հեղուկ։

Սարատովի նահանգում յուլիսի 29-ին հիւանդացան խօլերայով 23, մեռան 11։ Աստրախանի նահանգում յուլիսի 28-ին հիւանդացան 19, մեռան 12. Սամարայի նահանգում յուլիսի 28-ին եղել են նաև 5 դէպք. Նոր-Նախիջևանում յուլիսի 28-ին հիւանդացան 2. Դոնեան Զօրաց շրջանում Գնիլօվսկի ստանիցայում յուլիսի 28-ին հիւանդացան 3, Զաքէնսի ստանիցայում 1. Նովօչերկասում յուլ. 28-ին գտել են մի հիւանդի, որ եկել էր Ռօստով-Դոնի վրա «Կավկազսկայա» կայարանից (Վլադիկավկազի երկաթուղուց)։ յուլ. 26-ին հիւանդացան և միւս օրն էլ մեռան Ռօստովից եկած երկու մեքենավարներ։ Կազմում գտել են յուլիսի 23-ին խօլերայով կասկածելի մի հիւանդի։ Կասկածելի դէպքեր նկատվել են յուլ. 27-ին Նիժնիում։ Յուլիսի 28-ին մեռաւ մէկը Նովօրօսիյսկի երկու հիւանդանոցում. հիւանդը եկել էր Ցարիցինից։

Տուլայից գրում են, որ Եպիֆանովսկի գ. Լէսկա գիւղում մեռաւ խօլերայի նշաններով մի գեղջկուհի։

Ռոստով Դ/Վ. քաղաքապետութեան մէջ յուլիսի 29 և 30-ին հիւանդացան 33, մեռան 14։

Աստրախանի նահանգում յուլ. 30-ին խօլերայով հիւանդացան 21, մեռան 18։ Սարատովի նահանգում յուլ. 29-ին հիւանդացան 23, մեռան 15. Դոնեան Զօրաց շրջանում յուլ. 27 և 28-ին հիւանդացան 5, մեռաւ 1։ («Հ. Գ.»)

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԺՈՂՈՎ

—

Ուրբաթ, օգոստոսի 1-ին երեկոյեան, Թիֆլիսի բօրսայի դահլիճում կայացաւ մի բազմամարդ ժողով, որին ներկայ էին 300 ից աւելի թիւրքահայեր և ռուսահայեր։

Ժողովը բացեց պ. Հ. Առաքելեան, որը ասաց հետևեալը.

«Յարգելի ժողովականներ։ Ամենքիդ յայտնի է արդէն, որ Թիւրքիայում սահմանադրութիւն հռչակվեց։ Այդ անակնկալ լուրը հիացմունք և անասելի ուրախութիւն պատճառեց ամբողջ հայութեան։ Այդ ուրախութիւնը առանձնապէս մեծ էր տարագրեալ մեր թիւրքահայ եղբայրների համար, որոնք բուռն ցանկութիւն յայտնեցին վերադառնալ իրանց վաթանը։

«Մի խումբ ինտելլիգենտ թիւրքահայեր դիմելով «Մշակի» խմբագրութեան, խնդրեցին նախաձեռնութիւն վերցնել և կազմել մի բազմամարդ ժողով, մշակել նաև մի օրակարգ՝ ժողովի քննութեանը ենթարկելու համար։

«Խմբագրութեան կարծիքն էր, որ ժողովը լինելու է զուտ թիւրքահայերի [illegible] րով ռուսահայերը չը պէտք է մասնակցեն այդ ժողովին և նրա որոշումներին։ Իբրև անդամ քարտուղար Թիւրքահայ Հանգանակիչ Մասնաժողովի, ստանալով պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտուութիւն ժողովը գումարելու և բանալով ժողովը, ես խնդրում եմ ընտրել նախագահ և քարտուղար թիւրքահայերից»։

Այնուհետև պ. Առաքելեան կարդաց ընդգծված օրակարգը, որի գլխաւոր կէտերն էին մի կենտրոնական բիւրօ հաստատելու խնդիրը, անցաթղթերի, Կարմիր Խաչի օգտին 5-ական ռուբլի վերցնելու, զանազան հաստատութիւններից թիւրքահայ գաղթականների համար ժողոված գումարների մնացորդները յետ ստանալու, երաշխաւորութեան հարցերը և այլն։

Կէս ժամ տարաբերվելուց յետոյ նախագահ և քարտուղար ընտրվեցին թիւրքահայեր պ. պ. Պօղոսեան և Շահրազեան։

Սկսվեց մտքերի յախուռն փոխանակութիւն օրակարգի շուրջը։

[illegible] կէտ առնելով օրակարգի հարցերի վրա նկատեց հետևեալը. «Այսօրվայ ժողովը չէ կարող զբաղվել բոլոր դըրված հարցերի մանրամասն մշակութեամբ. Դա պէտք է կանգ առնել նրանց վրա միայն այն չափով, որ լուսաբանէ նրանց նշանակութիւնը թիւրքահայերի վերադարձի համար։ Միայն մի հարց կարելի է և պէտք է վճռել այսօր. դա կենտրոնական մասնաժողովի կամ յարաբերութեան բիւրօյի կազմութեան և ընտրութեան խնդիրն է։ Միւս հարցերի մասին պէտք է լսել ժողովականների կարծիքները, որպէսզի պարզված լինեն այն խնդիրները, որոնցով պէտք է զբաղվի բիւրօն և որոշվի նրա ֆունկցիան»։

Դր. Վարդանեանը մանրամասնութիւններ հաղորդեց անցաթղթի մասին. Պարզվեց, որ հիւպատոսը յայտնել է, որ աղքատ գաղթականներին չէ կարելի ձրի անցաթուղթ տալ, արդէն ընդունված է եղել Կ. Պոլսից այդպիսի անցաթղթեր տալու, որ ժամանակին անցրած անցաթղթերի տուգանքից տուգանք չառնվի, որ, որևէ թուղթ չունեցողները եթէ կամենում են հայրենիք վերադառնալ՝ պէտք է ներկայացնեն երկու-

---

պատրիարքին պաշտօնանկ անել. Ժողովուրդը չէ հանդարտվում. վերջը մի ժամ այդ մասին պատրիարքի հետ բանակցելուց յետոյ, դարձեալ դուրս է գալիս Նորատունկեան և յայտարարում, թէ Օրմանեան գրաւոր հրաժարական է տուել արդէն։ Ժողովուրդը, որ, ընդհանրապէս, յարգում է Գաբրիէլ Նորատունկեանին, լսում է նրան և դադարում աղմկելուց. ոմանք նոյնիսկ Նորատունկեանի ձեռքերն են համբուրում։ Դրանից անմիջապէս յետոյ Օրմանեան թողնում է խառն ժողովը և կառք նստելով հեռանում է իր տունը, իսկ խառն ժողովը միաձայն պատրիարքական տեղապահ է ընտրում Դուրեան սրբազանին, որ այդ միջոցին Կ. Պոլիս էր եկել Զմիւռնիայից։ Դուրսը հաւաքված ժողովուրդը ծափահարութիւնով է ընդունում այս լուրը։

Հարցնում եմ հասարակ ժողովրդից ոմանց Օրմանեանի մասին։ Բոլորի կարծիքն էր, թէ Օրմանեան մի քանի հայ պաշտօնեաներով շրջապատված, ինչպէս Արիս Ֆէտճեան, Ռոբերտ Եաղըճեան, իր քեռայրի եղբայրը՝ Տիգրան Տէր-Ներսէսեան և այլն, ոտնակոխ է արել ազգային շահերը և նոյնիսկ դրամական զեղծումներ է կատարել. շատերը գանգատվում էին, թէ իրանք դիմել էին նրան այս կամ այն անձնական գործի համար և նա չէր պաշտպանել նրանց դատը կառավարութեան մօտ, և դառն գայրոյթ էին յայտնում պատրիարքարանի ա. գործակատար Արիս Ֆէտճեանի դէմ, որին ի դէպ ասած նոր տեղապահը վերահաստատել է իր պաշտօնում։ Օրմանեանի հակառակորդ խումբը գործը այն աստիճան ծայրայեղութեան էր հասցրել, որ խայտառակ բովանդակութեամբ ծաղրանկարներ էր բաց թողել նրա վրա և հրէշալ [illegible], զզուելի ածականներ տալով. փողոցներում ծախում էին «հայոց պատրիարքի» այդ պատկերները... Նոյնիսկ միւս հասարակութիւնները վրդովված էին այս անվայել չափազանցութիւններից. մի յոյն բարեկամ սաստիկ զարմանք էր յայտնում ինձ հայերի այդ տգեղ վարմունքի մասին։ Մի լուրջ յոյն թերթ՝ «Կոստանդինուպօլիս» ընդհանուրի զգացմունքի թարգման է հանդիսանում, հայ ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրելով այս անտակտ վերաբերմունքի վրա։

Այս բոլոր դէպքերի բացատրութիւնը բուն իր աղբիւրից լսելու համար այսօր երեկոյեան ժամը 7 ին մի բարեկամի հետ միասին, որ լաւ ճանաչում էր նրան և գիտէր բնակարանը, գնացի դէպի այդ կողմը, որ անձամբ տեսակցեմ հետը։

Դուք գիտէք, որ ես Օրմանեանի պաշտպաններից չեմ, բայց ինչ որ ես այդտեղ տեսայ, այնքան զզուեցրեց ինձ, որ չէի կարող խորին ցաւակցութիւն չը զգալ թէ Օրմանեանի անձի և թէ Կ. Պոլսի հայ ամբոխի անվայել վարմունքի մասին։ Օրմանեանի տան շուրջը և մերձակայ փողոցները բռնված էին ահագին բազմութեամբ. դրան առջև մի փակ կառք էր սպասում։ Ամբոխից զայրոյթի ձայներ էին լսվում նախկին պատրիարքի հասցէին։ Մի քանի րոպէ յետոյ Օրմանեան սրբազան՝ Թիւրք ոստիկանապետի ընկերակցութեամբ դուրս է գալիս տանից և մտնում կառք. նրա հետ նստում են ոստիկանապետն և իր օգնականը։ Ամեն կողմից թափվում են կառքի վրա հասարակ դասակարգային պատկանող զանազան մարդիկ, մէկը բարձրանում է կառքի վրա, միւսը ետևը, երրորդը մի պատուհանից է կախվում, չորրորդը միւս պատուհանից և բռունցքները ուղղում պատուհաններից ներս դէպի նրան, որ դեռ երէկ Թիւրքիայի հայոց ամենազօր պատրիարքն էր, բայց բռունցքները հասնում են ոստիկանապետի և իր օգնականի թևերին և ոչ իրանց բուն նպատակին։ Կառքը շարժվում է առաջ ամբոխի միջից, ոմանց արձակած սուլոցների և «եուհա» անարգական աղաղակների։ Երբ կառքը անցնում էր իմ առջևից, գլուխս դարձնում եմ միւս կողմ, որ նրան չը տեսնեմ, ակամայ արգահատանքից դրդված... Հազարաւոր ամբոխը վազում է կառքի ետևից, որ այսպէս անցնում է քաղաքի գլխաւոր փողոցից՝ ամբողջ Պէրան, Ղալաթիան, և երկու կողմի վրա զարմանքով շարված օտար հանդիսատեսների միջով անցնելով դիմում է Կում-Գափուի հայոց պատրիարքարան։ Ինձ պատմում են, թէ իբր թէ Օրմանեան ուզեցել է փախչել առանց հաշիւ տալու իր տրամադրութեան տակ գտնված գումարների մասին և հայ ժողովուրդը նրան բռնի և այն էլ այդպիսի խայտառակ կերպով տարել է պատրիարքարան, որ այնտեղ բանտարկված մնայ մինչև հաշիւ ներկայացնելը։ Ամբողջ Կ. Պոլիսը՝ այդ երեկոյ հանդիսատես էր հայոց պատրիարքի կրած այս անպատուութեան ցոյցին...

III

Այդ տխուր տեսարանից յետոյ, ես երեկոյի մնացորդ մասը անցկացրի քաղաքային այգում, ուր նոյնպէս ժողովրդական ցոյց կար, բայց որքան աւելի վեհ, աւելի հաճելի։ Ցոյցը սկսվել էր կէսօրը ժամը 2½ ից։ «Միութիւն և Յառաջադիմութիւն» թիւրք կոմիտէն, որ այժմ ամենազօր է Կ. Պոլսում, ունենալով իր կողմը Մակեդոնիայի ամբողջ բանակն և Կ. Պոլսի բանակի մի մասը, այդ օրը քաղաքային այգու ամֆիթէատրում թիւրքերէն լեզուով մի ներկայացում էր կազմակերպել։ Ներկայացվում էր ալբանացիների կեանքից մի պիէս, որ նախկին ըէժիմի ժամանակ արգելված էր և առաջին անգամ էր բեմ դրվում։ Գնացի այդ ներկայացման։ Թատրոնը ծայրէ-ծայր լիքն էր։ Պիէսը թոյլ գրուած է, դերասաններն ու դերասանուհիները էլ՝ մեծ մասը թիւրք, բացի դերասանուհիներից, վատ էին խաղում։ Երբ վարագոյրը բացվեց, ալբանացի հովիւներ ներս մտան բեմ խակական էլէրով և ոչխարների երամով, որոնք պտոյտ կատարեցին բեմի վրա և դուրս ելան։ Բայց խնդիրը ի հարկէ ոչ պիէսի կատարման եղանակի և ոչ էլ դերասանների արուեստի վրա էր։ Նպատակը մի խաղաղ ցոյց էր և այդ աջողվեց։ Թատրոնի ժողովուրդը ստուար մեծամասնութեամբ թիւրքերից էր բաղկացած. զինւորականները քիչ կային։ Կար երաժշտական օրկէստր, որովհետև պիէսում կային տեղական պարեր և երգեր։ Օրկէստրի կառավարիչը մի հայ երաժշտապետ էր, Լևոն Չիլինկիրեան։ Ներկայացման ժամանակ հայոց կեդրոնական վարժարանի երգեցիկ խումբը՝ Թիւրքաց զինւորական հագուստներ հագած՝ օսմանեան սահմանադրական նոր մարշն է երգում։ Պիէսի մէջ մի տեղ թիւրք դերասանը՝ պարագային յարմարեցնելով ասում է. «Այժմ դրա ժամանակն անցել է։ Այժմ մենք ազատութիւն և սահմանադրութիւն ունենք»։ Ամբողջ թատրոնը դղրդում է ծափահարութիւնների տակ... Ամեն ինչ անցնում է վերին աստիճանի խաղաղ։

Ներկայացման վերջին չը սպասած, ես դուրս ելայ թատրոնից, գնացի վիեննական Մխիթարեանների այստեղի վանքը այցելութեան և ապա Օրմանեանի մօտ, ուր անակնկալ կերպով պատահեցի վերև նկարագրած դէպքերին։ Երեկոյեան ուշ ժամանակ ես վերադարձայ քաղաքային այգի խաղաղ ցոյցի վերջաբանը տեսնելու։ Սա այն տեսակ ցոյցերից էր, որոնք ահա 15 օր է համարեա ամեն օր քաղաքի զանազան մասերում տեղի են ունենում և անցնում են կատարեալ խաղաղութեամբ։ Քաղաքային այգում ներկայ էր Թնդանօթարանի երաժշտական խումբը և ասեղ գցելու տեղ չը կար։ Սահմանադրական մարշը անընդհատ ածում էին, [illegible] և ծափահարում։ Այգին լիքն էր թիւրք օֆիցերներով, որոնցից մէկը մի բանախօսութիւն արտասանեց՝ քարոզելով հայրենասիրութիւն և ազատութեան հաստատ պահպանում։ Բայց ամենից սիրունն այն եղաւ, որ զինւորական երաժշտական խումբը մի մեծ պտոյտ կատարեց այգու մէջ. առաջից գնում էին թիւրք երիտասարդներ և զինւորականներ, որոնք երգում էին սահմանադրական մարշի խօսքերը, երբ օրկէստրը նրանց հետևում էր ուղանչելի կերպով ածելով այդ գեղեցիկ եղանակը. ապա գալիս էր ահագին բազմութիւնը։ Լսվում էին շարունակ՝ «կեցցէ սահմանադրութիւն, կեցցէ ազատութիւն, կեցցէ ազգ. հայրենիք» և այլն. «կեցցէ սուլթանը» բացագանչութիւնը, որ առաջին օրերը շատ էր լսվում, այժմ աւելի քիչ է լսվում... Եւ այսպէս հազարաւոր բազմութիւնը ցոյց է անում, խրախճանք, կեցցէներ, ձայներ և ոչ մի անվայել խօսք, ոչ մի անկարգութիւն։ Ոչ մի տեղ ոչ մի ոստիկան չէր երևում. կարգապահութիւնը ինքը ժողովուրդն էր պահպանում ամեն տեղ։ Ինձ մօտ մի ծովային օֆիցեր, մի քիչ հարբած գարեջրից, փոքր ինչ անյարմար աղաղակներ էր հանում, որ խանգարում էր կարգը. անմիջապէս իր ընկերները բերանը ձեռքերով փակեցին և չը թողին, որ այլևս ձայն հանի։ Եւ այս խաղաղ ցոյցը տևեց մինչև գիշերվայ ժամը 12-ը, երբ օրկէստրը մեկնեց ծափահարութիւնների աղմկի տակ։ Որքան տարբերութիւն այս ցոյցի և մի քիչ առաջ տեսածս հայ ամբոխի ցոյցի միջև....

Սարուխան

Թիւրքահպատակ վաճառականների հրաշխաւորագիր. որ այն Թիւրքահպատակները՝ որոնք պարսկահպատակութեան անցաթղթեր ունեն, կարող են խնդրագրերով դիմել և ստանալ նոր անցաթղթեր և այլն։

Սօլովեան խօսում է ռուսահպատակութիւն ընդունած Թիւրքահայերի մասին։ Կողմնակից է անցաթղթի հարցը բաց թողնելուն։ Նաև շեշտում է, որ գլխաւորապէս պէտք է մտածել այստեղից գնացողների մասին, մի կողմ թողնելով այն խնդիրը, թէ Թիւրքիայում արգելքներ կա՞ն արդեօք գնացողների համար, թէ ոչ։

Դր. Վարդանեան առաջարկում է Բ. Դռնից խնդրել ձրի անցաթղթեր։

Խօսում են կրկին ուրիշները. վերջում ընդունվում է այսպիսի մի բանաձև, որ հաստատվելիք բիւրօն կամ յանձնաժողովը դիմէ Կ. Պոլիս և արտօնութիւններ խնդրէ Թիւրքահայ վերադարձողների համար, որպիսի արտօնութիւնները գործադրվելու են տեղական հիւպատոսների միջոցով։ Նաև դիմումն անէ ռուսաց արտաքին գործերի մինիստրին և նրանից էլ մի քանի դիւրութիւններ խնդրէ, որ վերադարձող Թիւրքահայերը ազատ կերպով, առանց խոչընդոտների հանդիպելու, կարողանան Թիւրքիա վերադառնալ։

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Կարս, 31 յուլիսի

Ամբողջ ամիս ու կէս է անձրևի երես չենք տեսել։ Հացաբոյսերը խանձվեցին ու չորացան։ Միսը թանգացել է. քաղաքի դեպուտատները իրար միս են ուտում, իրար հալածում, իրար վրա բողոքներ տալիս։ Այդ պարոններից երեքը ամեն միջոց գործ դնելով աշխատում են բիւրոկրատիային դուր գալ, կշեռքի ծանր կողմը նստել և «որտեղ հաց՝ այնտեղ կաց, որտեղ գինի՝ այնտեղ քնի» առածն ամեն բանից բարձր դասել։ Ամբողջ աշխարհը փախչում է բիւրոկրատիայից, ջանք անում հին ռէժիմը ոչնչացնել, մարդասիրական, ընկերական գաղափար մտցնել, իսկ մեր դեպուտատները՝ մի անպէտք պաշտօնից, մի կտոր հացից չը զրկվելու համար հեռանում են ժողովրդից, մտնում են բիւրոկրատիայի փեշերի տակ։

Արամ

—

Բաթում, 31 յուլիսի

Բաթումում կատարված շատ չնչին դէպքերն իսկ անմիջապէս տեղեկագրվում են «Վտակ», «Զանգակ» թերթերին, շնորհիւ պաշտօնական թղթակիցների։ Բայց ամիսներից ի վեր է, չը նայած այդ թերթերի խմբագրութեան մի անդամն էլ վաղուց այստեղ է և մասնակցում է ծխական ժողովներին, հոգաբարձութեան նախկին գանձապահի և երէցփոխի մօտ 1500 ր. գումարի մասին այդ թերթերը ոչ մի լուր չեն հաղորդում, չը նայած վերաստուգող յանձնաժողովը այդ արձանագրել, ծխական ժողովը վաւերացրել և գանձապահ-երէցփոխանն էլ յանձնառու է եղել ու վէքսիլներ տուել։

X.

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ

—

Պորտուգալիայից Տօլստօյի յօբելեանին պատգամաւոր է ընտրված Տիգրան Նազարեան, որն արդէն այնտեղից ստացել է երկու ուղերձ յանձնարարութեամբ Լիսբոնի միջազգային խաղաղութեան, գրական և արուեստագէտների կենտրօնական կօմիտէի՝ անձամբ ողջունել «մեծի աւետարանիչին» և մատուցանել նրան ուղերձները։

Սրանցից մէկը գրված է պօրտուգալերէն և ստորագրել են գիտնականներ, գրականագէտներ, հրապարակախօսներ, մինիստրներ, դէպուտատներ և այլք, օրինակ Th. Braga (Նախագահ Պօրտուգալիայի գիտութեան ճեմարանի), B. Machado (մինիստր և նախագահ Coimbra ինստիտուտի), H. Zopes (դրամատ. և արուեստ. ընկ. խորհրդի նախագահ), D. Magelheas (գրականագէտ, դպրոցների միութեան կօմիտէի նախագահ)։

Այս ուղերձին մասնակցում են Լիսբոնի գիտութեան ճեմարանը, մատենագիրների սինդիկատը, դպրոցների միութիւնը, հրապարակախօսների և լրագրողների դաշնակցութիւնը, ազգային ազատ թատրոնի արտիստների շրջանը, դրամատուրգների և և գրականագէտների ակումբը և այլն։

Երկրորդ ուղերձը ֆրանսերէն լեզուով տուած է, որ պատկանում է բանաստեղծ դրամատուրգ պ. A. Zima-ի գրչին (L'Anti Homme պօէմի հեղինակ) Լիսբոնի միջազգ. խաղաղութեան, գրականագէտ. և արուեստ. կենտր. կօմիտէի ընդհանուր քարտուղար։

Z

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յօգուտ Մուրացանի ստացված Կօկանդից 40 ր. 95 կ.-ը մենք յանձնեցինք բժշկապետ Օրբելուն, որի խնամքի տակ է գտնվում հիւանդը Միքայէլեան հիւանդանոցում, ի նկատի ունենալով որ անհրաժեշտ ծախքերի համար ևս հիւանդը դրամ չունի։

◆ Ինչպէս յայտնի է, օգոստոսի կէսերին Մոսկվայում գումարվելու է կլիմայախօսական ցուցահանդէս։ Թիֆլիսի բուսաբանական այգին այդ ցուցահանդէսին ուղարկում է 600 տարբերկրեայ օգտակար բոյսեր, որոնք կարող են բուսնել Թիֆլիսի կլիմայական պայմաններում։ Միաժամանակ այգին ուղարկում է և մի բացատրիչ գրութիւն ու իր աշխատանքներից մի քանիսը կլիմայախօսական հարցերի վերաբերութեամբ և կովկասեան պտուղների ժողովածու։

◆ Ա. Քալանթար երկրագործութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրի անունով տուած յայտարարութեամբ միջնորդութիւն է յարուցանում երկրագործութեան վարչութեան առաջ տալու 500 ր. 20 հատ էնկիւրիի տեսակի այծ գնելու համար, զարգացնելու նրանց Սարիղամիշում և Կարսի շրջանի այլ կէտերում։

◆ Կովկասի նահանգական քաղաքներում կազմակերպվել են մանր վարկի նահանգական յանձնաժողովներ նահանգապետների նախագահութեամբ, մասնակցութեամբ երկրագործութեան վարչութիւնների, արքունական պալատների ներկայացուցիչների, նահանգական վարչութիւնների մշտական անդամների և հասարակական երկու գործիչների։ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կողմից իբրև ներկայացուցիչ Թիֆլիսի յանձնաժողովի համար ընտրվել է Րցխիլաձէ, իսկ Քութայիսի յանձնաժողովի համար Դունցաձէ և Կուտատելաձէ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը տեղեկացնում է նահանգապետին, որ, նկատի առնելով որ անդրկովկասեան երկաթուղիների վարչութիւնը մերժեց կայարանի մերձաւոր հրապարակը և կայարանի ապրանքների սրահը յատկացնել բեռնակիր կառքերի կանգնատեղիի համար, նրա համար միակ յարմար տեղ պէտք է համարել Դիդուբէի Նադիրեան հրապարակը, որ կոչվում է Բաթումեան։ Բայց դրա համար անհրաժեշտ է, որ քաղաքը կապալով վերցնէր կամ գնէր այդ հողը և կարգի բերէր նրան մանաւանդ սանիտարական տեսակէտից։ Այս բոլորի մասին նահանգապետն իր կողմից հաղորդեց քաղաքագլխին, խնդրելով հարցը անմիջապէս ներկայացնել քաղաքային վարչութեան քննութեան։

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտարական բժշկական մարմինը յուլիսի 31 ին քննութիւն կատարեց խօլերայի նշաններով հիւանդացած չորս կասկածելի հիւանդների վերաբերութեամբ։ Քննութիւնը պարզեց, որ այդ չորս հոգին հիւանդացել են ոչ խօլերայից։

◆ Թիֆլիսի կոյրերի դպրոցին այս տարի յատկացված է 4800 րուբլի։ Բացի դրանից աչքի ձրի հիւանդանոցների համար յատկացված է 2000 րուբլի։

◆ Վարկային ընկերութիւններ են հաստատվել Փօթի քաղաքում և Քութայիսի նահանգի Բօսլէթի և Կեչէէտի գիւղերում։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է յայտնի երիտասարդ գրող Տանը։

◆ Յուլիսի 31-ին խուզարկութիւնից յետոյ ձերբակալել են քաղաքային անասնաբոյժ Լանգին։

◆ Երէկ, Թիֆլիսի նահանգապետը ուղարկեց Թիֆլիսի քաղաքագլխին մայիսի 27 ին նահանգական ատեանի կայացրած որոշման պատճէնը քաղաքային դումայի նախկին քարտուղար Իւ. Սիմէնովի գործի վերաբերութեամբ, որ շարադրված է քր. պատժ. 411-րդ յօդուածով, որ ճառում է ծառայութեան մէջ զեղծում կատարելու մասին։

◆ Երէկ Թիֆլիսի նահանգապետը հաղորդեց քաղաքագլխին, որ նրա կողմից արգելք չը կայ կատարելու քաղաքային դումայի այն որոշումը, որ վերաբերում է ֆունիկուլեօրի ընկերութեան հետ կայացված համաձայնութիւնը փոփոխելու խնդրին։

◆ Օգոստոսի 2-ին, առաւօտեան ժամը 8-ին, կախեցին զինուորական նահանգական դատարանից մահվան դատապարտվածներ Ալի Նաղի-օղլուն, Սամադ Կուրբան-օղլուն և Վալի Մամադ օղլուն։

◆ Ջէվաթի և Շամախու գաւառներում մորեխը բաւականաչափ պակասել է։ Մորեխի ձուիկները ոչնչացնելու աշխատանքները սկսված են Շուշու գաւառում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Յուլիսի 31 ին ոստիկանութիւնը ձերբակալում է Լևոն Շահինեանի աւազակախմբի տասնմէկերորդ անդամին, որ ալէքսանդրօպօլցի Յարութիւն Մկրտչեանն է։

◆ Յուլիսի 31-ին ոստիկանութիւնը ձերբակալում է Գէօրգի Բարիկևին, որ Թիֆլիսի ժամ. գեն. նահանգապետի կարգադրութեամբ աքսորված էր գեներալ-նահանգապետութեան սահմաններից։

◆ Յուլիսի 31-ին, ցերեկվայ ժամը 12 ին, բանկային տուն ունեցող Ա. Փրիդոնովը յանձնում է իր ծառայ թիւրքահպատակ Ղազար Տէր-Մելիքսէթեանին 1100 րուբլու չեկ՝ ստանալու փոխադարձ վարկի ընկերութիւնից։ Ստանալով այդ փողերը և գալով գրասենեակ, Տէր-Մելիքսէթեանը յայտնում է, որ փողերը նրանից կամ գողացել են կամ նա կորցրել է։ Տէր-Մելիքսէթեանը ձերբակալված է։ Քննութիւն է կատարվում։

◆ Յուլիսի 31 ին ձերբակալել են Գարսօ Բաղդասարեանին, Սաքօ և Իվան Մաչաձէին, Մարգար և Ալէքսանդր Մանուկեանին և Իվան Յակոբեանին, որոնք 27-ին զանազան արծաթեայ և ոսկեայ իրեր գողացան գնդապետ Աստախովից։

◆ Յուլիսի 31-ին ձերբակալվել են Աղամ Գամարօվ և Սիկօ Բերիկաշվիլի, որոնք վիրաւորել էին դռնապաններ Օսիպօվին և Սաֆրանովին։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յուլիսի 29 ին Բաիլովի կենտրօնական բանտից փախել է յայտնի յանցաւոր Ալէքսանդր Մանսուրաձէն, որ գտնվում էր քննութեան տակ՝ մեղադրվելով պայթուցիկ նիւթեր պահելու և ոստիկանութեանը դիմադրութիւն ցոյց տալու համար։ Չափազանց խորհրդաւոր բնաւորութիւն ունեն նրա փախստեան հանգամանքները։ Առաւօտեան ժամը 10-ին երկրորդ անգամ կալանաւորներին ստուգելիս՝ 3 րդ ոստիկանամասի պրիստաւը, որ ուղարկված էր բանտը վերահսկելու, նկատեց որ Մանսուրաձէն անյայտացել է։ Խուզարկութեան ենթարկեցին բանտի բոլոր սենեակները, բայց ապարդիւն կերպով։ Պարզվել է միայն այն, որ առաւօտեան առաջին ստուգութեան ժամանակ նա ներկայ է եղել։ Որովհետև առաջին ստուգութեան և երկրորդի ընթացքում, որ կատարվում է առաւօտեան ժամը 11-ին, բանտի բակից սայլով դուրս են տարել մուրներ, ուստի հաւանական է թւում, որ Մանսուրաձէին դուրս են տարել սայլով այդ մուրի տակ։ Աջակցութիւն ցոյց տալու մեղադրանքով, սայլապանից բացի կալանաւորված են նաև մուրի արտահանութեան վերահսկող գորոդովոյներ Մամուն Կոզուբիձէ և Սաֆի Իւլա Կուլիբին, որոնք ժամանակաւորապէս փոխադրված էին բանտում պաշտօնավարելու։

◆ Սաբունչիում՝ Ալիէվի տան մէջ, մի բանւորի բնակարանում յուլիսի 28-ին հաւաքվել էին մի քանի ընկերներ և սազանդարներ՝ հրաւիրելով տնային պարահանդէս սարքել։ Պարողներին միանում է նաև բանւոր Միքայէլ Մուրադեանը։ Նորեկի պարը դուր չը գալով սազանդարներից մէկին, վերջինս սկսում է բարձրաձայն քննադատել պարողին։ Միքայէլ Մուրադեանը հանելով ֆիննական դանակը ուզում է հարուածել քննադատողին։ Միջամտում է Յարութիւն Միրզայեանցը, որին և կպչում է հարուածը՝ վիրաւորելով նրան ձախ կողքից։ Վերջինս արիւնաշաղախ վայր է ընկնում։ Յանցաւորը դուրս է գալիս և սկսում փախչել, բայց գորոդովոյները բռնում են։ Վիրաւոր Միրզայեանցը ուղարկված է հիւանդանոց։ Վէրքը համարվում է վտանգաւոր։

(«Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Գերմանիայի «էյլենբուրգեանները», ինչպէս երևում է, իրանց ջերմ հետևողներն են ունեցել Պետերբուրգի որոշ շրջաններում։ Յայտնի գրողներից մէկը ներկայումս պատրաստում է տպագրութեան յանձնելու «Պետերբուրգի հօմօսեքսուալիստները» վերնագրով մի գիրք։ Ասում են, որ այդ գիրքը պարունակում է ցուցմունքներ արուամոլների դասին պատկանող անձանց մասին։ Նրանց թւում յիշված են շատ բարձրաստիճան անձինք, արտիստներ, բանկիրներ։ Այդ կլուբի նախագահն է կայսերական թատրոնների տաղանդաւոր արտիստ Դ., որին հեղինակը համարում է կլուբի կազմակերպիչ։ Գիրքը խիստ մերկացնող բնաւորութիւն ունի. այնտեղ առաջ է բերվում կլուբի ամբողջ պատմութիւնը, նոյնիսկ մատնացոյց անելով այն սենեակը, ուր կլուբի անդամները պարապվում էին սոդոմական մեղքով։ Արդէն վաղօրօք նախագուշակում են, որ հեղինակը երկրորդ Գարդէն պիտի հանդիսանայ, իսկ այդ գիրքը խոշոր աղմկայոյզ հետևանքներ կունենայ։ Յամենայն դէպս պետերբուրգցիները մեծ անհամբերութեամբ սպասում են այդ գրքի լոյս տեսնելուն։

(«Р. Сл.»)

◆ Յայտնի Իօանն Կրոնշտադտկին մի աղօթք է կազմել Լ. Ն. Տօլստօյի և կոմս Ս. Իւ. Վիտտէի մեռնելու համար։

◆ Լուցկիների սինդիկատը յայտարարել է, որ շվէդական լուցկիների գները իւրաքանչիւր արկղին իջեցրել է 28 կօպէկ։ Սինդիկատի այդ քայլը ուղղված է բացառապէս այն գործարանատէրերի դէմ, որոնք չեն միացել սինդիկատին։

(«Р. Сл.»)

◆ Կենտրօնական ստատիստիքական կօմիտէի հաւաքած տեղեկութիւնների համաձայն, մինչև յուլիսի 1 ը հացահատիկների բերքը հետևեալ դրութեան մէջ է եղել Ռուսաստանի 68 նահանգներում ու շրջաններում։ Աշնանացանները անբաւարար են 9 նահանգներում, որոնցից ամենից վատն է միայն Խերսոնինը։ Միջակից բարձր են 21 նահանգներում, բաւարար են կամ լաւ 30 նահանգներում։ Գարնանացանները միջակ են 2 նահանգում, բաւարարից պակաս է 20 նահանգներում, բաւարար են և բարձր բաւարարից՝ 45 նահանգներում, լաւ է Տօմսկի նահանգում։ Տրված տեղեկութիւններից նկատվում է, որ հացահատիկների բերքը բաւարարից էլ աւելի է այս տարի։ Առաջ բերելով այդ տեղեկութիւնը, «Россія» պաշտօնական թերթը ուշադրութիւն է հրաւիրում դրա վրա։

◆ Երկրագործութեան մինիստրութիւնը գիւղական ազգաբնակութեան մէջ գիւղատնտեսութեան համար օգտակար գիտելիքներ տարածելու նպատակով ներկայ տարվանից մասնաւոր տնտեսութիւնների կից բանալու է յատուկ դպրոցներ գիւղական աղջիկների համար։ Այդ տեսակ դպրոց արդէն բացված է Վլադիմիրեան նահանգի Դուբկի կալուածքում և շուտով բացվելու են այդպիսիները նաև Սարատովի, Սամարայի, Տամբովի և Պենզենի նահանգներում։ Այնտեղ ընդունվում են ամեն դասի աղջիկներ, ոչ պակաս 15 տարեկանից, որոնք աւարտել են ժողովրդական դպրոցները։ Դասաւանդվում են հետևեալ առարկաները՝ տնաբարութիւն, անասնապահութիւն, հաշւապահութիւն, թռչնապահութիւն, պարտիզպանութիւն և մրգաբուծութիւն։ Աշակերտուհիների ընդունելութիւնը տեղի է ունենալու մինչև սեպտեմբեր։

(«Р. Ут.»)

◆ 1905—6 թւականների զինված ապստամբութեան վերաբերեալ գործերը վարող ոստիկանական դեպարտամենտը ներկայումս որոնում է 500 հոգուց աւելի մեղսակիցներ, որոնք, ինչպէս «Слово» լրագիրն է ասում, փախել են յանցագործութեան վայրից։

◆ «Рѣчь» լրագրի ասելով, յուլիսի 24 ի գիշերը Պետերբուրգի ոստիկանութիւնը բազմաթիւ խուզարկութիւններ է կատարել քաղաքում։ Միայն Շուվալովում և նրա շրջակայքում կալանաւորվել են մօտ 80 հոգի։

◆ Յուլիսի 25-ին հաշտարար դատաւորի մօտ քննվել է մի գործ, որով մեղադրվում էր կօնտր-ադմիրալ Շչեսինսկին էլեքտրաքարշի կօնդուկտոր Սիմօնենկոյին խօսքով ու գործողութեամբ վիրաւորելու համար։ Թաղական վերակացու Նիկոլայեվի, կօնտրօլեօր Դրոզդովի և քաղաքապահի տուած վկայութիւններով հաստատվել է, որ կօնդուկտորի բոլորովին օրինական պահանջին ադմիրալը պատասխանել է հայհոյանքներով և ապա ապտակել է նրան։ Հաշտարար դատաւորը, մեղաւոր ճանաչելով ադմիրալին, դատապարտել է նրան 2-ամսեայ կալանաւորութեան և 50 րուբլի տուգանքի։

(«Б. В.»)

ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ՍԷՅՄԸ

—

Յուլիսի 23-ին տեղի ունեցաւ ֆինլանդական սէյմի հանդիսաւոր բացումը։

Նրա կազմը նման է իր նախորդին։ Նկատելին միայն այն է, որ աւելացել է սօցիալիստների և կին պատգամաւորների թիւը։

Կարճ ասենք, երկիրը պատասխանեց սէյմի արձակմանը այնպէս, ինչպէս որ սպասում էին Ֆինլանդիայի տրամադրութեան լաւ ծանօթ մարդիկ։ Արդարև ֆինլանդացիք շուտով չեն բռնկվում ոգևորութեամբ, բայց որ բռնկվում են, շուտով էլ չեն հանգչում։ Իր ընտրած նպատակներին հասնելու յամառաբար ձգտող ֆինլանդական ժողովուրդը շատ երկար է պահում իր տրամադրութիւնը։ Շատ բնական է, որ սէյմի նոր կազմն էլ կարտայայտի այդ տոկուն տրամադրութիւնը։

Սակայն նոր սէյմի աշխատանքները, հիմնվելով այն հրահանգների վրա, որ ստացել են պատգամաւորները, այս անգամ պէտք է ընթանան ոչ թէ կռւելու եղանակով, այլ այն սահմանադրական ձևերի խաղաղ զարգացման ճանապարհով, որոնք 1905 թւի անցքերից յետոյ արդէն հաստատվել են երկրի մէջ։

Պետերբուրգի լաւատեղեակ թերթերից մէկը իր ֆինլանդական թղթակցի խօսքերով եզրափակելով Ֆինլանդիայում տիրող տրամադրութիւնը, ասում է, որ ներկայումս «Ֆինլանդիայի բոլոր քաղաքական կուսակցութիւնները, առանց բացառութեան, ուշադրութիւն են դարձնում այն դժուարութիւնների վրա, որոնց կեանքը յարուցանում է սէյմի գործունէութեան շաւղի վրա»։ Նրանք ամենքն էլ,—այդ լրագրի ասելով,—«պարզօրէն գիտակցում են, որ ներկայ պարագաներում երկրի համար շատ բան կարելի է վտանգել, և ժողովրդական ներկայացուցչութիւնից այդ պատճառով պահանջվում է աւելի շուտ աւելորդ զգաստութիւն, քան անմիտ շռայլումն»։

Որ այդպիսի տրամադրութիւն ունեն քաղաքական բոլոր խմբակներն էլ, այդ ամենից լաւ ապացուցվում է ընտրողների կողմից սօցիալիստ պատուիրակներին տրված հրահանգներով։ Տեղի ունեցած միտինգներից շատերում, որոնց ներկայ են եղել նորընտիր սօցիալ դեմօկրատ պատգամաւորները, ընդունվել են բանաձևեր հետևեալ իմաստով, թէ սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը «չը պէտք է իր գործունէութեամբ նպաստէ նոր սէյմի արձակմանը», իսկ աւելի կրիտիքական հանգամանքներում նոյնիսկ պէտք է «բոլորովին հեռու մնայ ձայնատւութիւնից»։ Այդ նշանակալից հրահանգը տալիս է մի ազգաբնակութիւն, որ իր տրամադրութեան անփոփոխ լինելը ապացուցեց արդէն ընտրութիւններով։

Սակայն դրանով ապացուցվում է և այն, որ ֆինլանդացիները խիստ կերպով կշռադատում են իրանց դրութիւնը և լաւ յիշում են Ալէքսանդր II կայսրի արտասանած խօսքերը 1864 թւին սէյմը փակելու ժամանակ։

«Ֆինլանդիայի իսկական շահերի պարզ ըմբռնումը,—ասաց այն ժամանակ կայսրը,—պէտք է զգուշացնի ձեզ ոչ թէ թուլացնելու, այլ և աւելի ամրապնդելու այն սերտ կապը, որ ծառայում է իբրև անփոփոխ երաշխաւորութիւն ձեր հայրենիքի բարօրութեան»։

Այդ խօսքերով մատնանշվում էր ֆինլանդական քաղաքականութեան կարևորագոյն խնդիրը։ Սերտ միութիւն կայսրութեան հետ ներքին ոյժերի խաղաղ զարգացման հողի վրա։

Երևի, հէնց այդպէս է հասկանում իր դերը նոր սէյմը։ Զայրոյթի տապը անցաւ, և սէյմը ըմբռնեց, որ երկրի ապագան կախված է նրա քաղաքական տակտից և իրանց այն օրինական պահանջները իրականացնելու հաստատակամութիւնից, որոնք հիմնված են օրէնսդրական անվիճելի ու անկասկածելի ակտերի վրա։

Սէյմի տալմանի պատասխան-ճառը ցոյց է տալիս, որ սէյմը հաստատապէս վճռել է բոլորովին կանգնած մնալ լօյալ հողի վրա, առանց ոտնձգելու թագի գերագոյն իրաւունքները և Ֆինլանդիայի ու Ռուսաստանի միջև գոյութիւն ունեցող պատմական փոխադարձ յարաբերութիւնները, բայց և առանց զիջելու օրինական կարգով ստացված իրաւունքները զանազան ժամանակաւոր ազդեցութիւններին ու հովերին։

Մի խօսքով, սէյմը անկասկած և հաստատապէս կանգնած է խաղաղ շինարարութեան հողի վրա, գիտակցօրէն հեռու մնալով իրանից այն վիճելի և սուր հարցերը, որոնք իր ժամանակին լարեցին կայսերական կառավարութեան և իր յարաբերութիւնները։ («Р. Утро»)

ՖԵԼԻԵՏՕՆ

ԿՐԿԻՆ ՋՆՋԵԼՈՒ ՑԱՒԸ

—

«Ասում են դիմացեր,
Ո՛նց դիմանամ...
Միթէ ես եմ քար»։

Նորից ջնջելու ցաւը հանդէս է գալիս։

Կրկին նոր կոտորածի մեծ պահանջ կայ... «Новое Время»-ի խմբագրատանը։

Այժմ էլ տառմայր Մենշիկօվն է երկանքի մէջ՝ ցաւով բռնված, տանջվողը։

Այս անգամ նա ինքն է յանձն առել Սուվօրին-Տիմօշկինների փափագած պօգրօմը ծնելու։

Հայացաւը նրան հանգիստ չէ տալիս։

Պարսկաստանին խոր քնից զարթեցնողը, նրա դարևոր խաղաղութիւնը տակն ու վրա անողները հայերն էին։

Դրանք էին, որ ժամանակին Սահմանադրութեանը կաշառելով Թիւրքիա հրաւիրեցին, երիտասարդ թիւրքերին եղբայրասիրական քարոզներով վարակեցին։

Դրանք են, որ աշխատում են այժմեան օրինակելի ջնջման սովորութիւնը վռնդել ամբողջ աշխարհից, հակառակ նեո-պօգրօմշչիկների...

Մէկն է, երկուսն է, կամ թիւ ու հաշիւ կա՞յ դրանց մեղքերին...

Ո՞ր «իսկական ազգասէրը» կարող է տանել դրանց գոյութիւնը։

Եթէ հայերի ջնջման հարցը Կովկասում այսքան ուշանում է, պատճառը ներկայ Փոխարքայի աններելի զառամութիւնն է, որը զրկում է նրան Տիմօշկիններին հասկանալու կարողութիւնից... ուստի և նա յարգելի Կոմսին աչքով աչք չունի տեսնելու...

Եւ երբեմն ծնվելիք նեոյի անտանելի ցաւերից այնպէս է ծկլթում մեր Տիմօշկինի սանամէրը, որ քիչ է մնում Վելիչկօներին, Գրինգմուտներին էլ դուրս բերի գերեզմաններից։

Եւ այդ ժամանակ մաղձ ու փրփուրի հզօր ժայթքումը տեսնելով նրա «Վեչէ» և «Զնամեա» թերթերի բարեկամները՝ զգում են, թէ մի գուցէ նեոը վիժման վտանգին ենթարկվի... Բայց սանամէրը, կրկին ուշքի գալով, նրանց յորդորում, քարոզում է.— անյապաղ. որտեղից որ է, մի Գօլիցին գտնել, ուղարկել Կովկաս, թէ չէ ներկայ հականեռական կոմսի օրով հայերը կը վարակեն ամբողջ Կովկասը։ Արդէն վրացիները կապիրը կտրած Մօլլա-Նասրէդդինի հօրթերն են դարձել, իսկ թուրքերն էլ խօմ շատ են երես առել, քիչ է մնում որ աստառ էլ ուզեն։

Ուստի նախ պէտք է, ասում է, ջնջել հայերին, մինչև որ հերթը կը հասնի կովկասեան միւս «կապիկներին»։

Եթէ աւազակներին հաշտեցնող կոմսը ջնջելու գործով լինէր զբաղված, այսօր երիտասարդ թիւրքերը հայերի խելքով չէին ընկնի և սիրելի համիդիականներին թողած՝ ցնորամիտ Սահմանադրութեանը չէին դիմի, որը ոչ հայ է ճանաչում, ոչ հրեայ և ոչ այլազգի...

Երկրորդ՝ քանի որ ուշ չէ, պէտք է խորհուրդ տալ, գրել, համոզել նրանց, թէ, բան է, սահմանադրութիւնից ազատվելու հնար չեղաւ, գոնէ զգուշանան հայերից, որ նրանք ոտք չը դնեն պառլամենտ։

Համեցէ՛ք

Եկէք այժմ արդարացրէք հայերին։ Եկէք, ասացէք, որ ի զուր էք ատում, այդքան թշնամանում հայերի հետ։

Ախար ինչպէս չը մեղադրեն ու ատեն։

Ե՞րբ էր, որ հայերն իրանց ամենամեծ թշնամուն խելքից չը զրկեցին և երկու աչքով կուրացրին։

Ո՞վ կարող է հաստատել, որ Գօլիցինը հայերի բարեկամն էր և չէր ուզում ջնջել նրանց գոյութիւնը, մոխրից էլ վատթար ձևով։

Բայց տեսէք, որքան էլ ջնջելու համար աշխատեց, երկու այնքան էլ տարածեց։

Ո՛րքան վտանգի էր ենթարկում նրանց կեանքը, նոյնքան էլ թեւ չէին ուզում նրանք այդ տեսակ կեանքի վրա։

Ո՛րքան էլ հալածանքի տակ էր պահում նրանց դպրոցները, գրականութիւնն ու լեզուն, այնքան էլ աւելի էին սիրելի դառնում նրանք և գրաւում էին իրանցից հեռացած՝ օտարացածներին։ Ինժեներ ու փաստաբան, բժիշկ թէ ուսանող, բոլորն էլ միատեսակ եռանդով մտածում, խօսում էին մոռացված լեզուով և ամենօրեայ ուտելու, հագնելու ցաւերին նախկին մեծ նշանակութիւնը չը տալով, մտաւորով էին ապրում։

Միմեանցից խորթացած, անջատ ույժերը հոգեպէս միացած՝ մի ցաւով էին տանջվում։

Գոյութիւնը ջնջելու դիմաց՝ գոյութիւնը պահպանելու հոգսն էր ամենուրեք։

Եւ ինչպէս չը մեղադրել այդ ազգին, երբ ջնջման բոլոր ծրագիրները՝ նրա «Թարս» բնաւորութեան պատճառով՝ հակառակ հետեւանքների էին հասցնում…

Ընդհանուր շահը իր հոգու հետ գրօշին վաճառող հայ վաճառականը հազար րուբլիներն անգամ չէ խնայում այդ ծրագրի դէմ։

Հլու, հնազանդ հայ երկրագործը իր կեանքի չարքաշ ընկերին — եզին էլ պատրաստ է ծախելու, մի «չախմախի» հրացանի հետ փոխելու—լոկ այդ ջնջող ծրագրի դէմ կռւելու համար։

Երբ արհեստաւորը շատ թեքվելուց իր մէջքի ծռութիւնը մոռացած, մշակ, բանւոր, գործակատար, իրանց հարստահարողների կեանքի ու գոյքի ջնջման դէմ ապահովելու անզուսպ ցանկութեամբ անդէն գինւորների են փոխվում յօժարակամ—ինչպէս «Թարս» անունը չը տալ դրանց։

Եւ ինչպէս չատել լուրջ՝ թշնամութեան այդ անարխիստներին։

Իսկապէս

Եթէ թշնամին չը լինէր, հազիւ թէ մեզնում մի գովելի յատկութիւն մնար։

Եկէք հիմա մեր մէջ խօսենք։ Միայն այն պայմանով, որ հանաքը մի կողմ թողնենք և չարամիտ ստախօսութիւնն էլ լիովին յանձնենք «Новое Время»-ի տխրահռչակ դիպլոմատներին։

Ի՞նչ ունենք ասելու։

Այժմ էլ խոմ Գոլիցին չը կայ, որ ասենք՝ հալածում է։ Նեռն էլ չէ ծնվել, որ ասենք թէ սանձերն է մեղաւոր։

Ո՞րն է մեր զարգացած, ինտելիգենտ պարոնների գովելի գործը։

Թղթախաղը խոշոր գումարներով, թէ՞ գնդակախաղը՝ թանգագին կեանքերից զրկող… Դեռ թողնենք ուսեալներից շատերի վերաբերմունքը անվրդով։

Այլանդակված կանոնադրութեան շնորհիւ մարդասիրականին ընդարձակ բարեգործութիւնից զրկելը, թէ՞ կուլտուրական անունով նրանից անջատվելն ու կիսաջան ապրելը։

Մեր ընկերութիւններում մշտական դատարկութի՞ւնը, թէ՞ տիրապետող դատարկութիւնից նոր ընկերութիւնների բազմանալը։

Ցանուց բանւորական շահերի պաշտպանութեան հազարաւոր գործաւորների անգործ, անհաց փողոցներ ձգելը, գողութեան, թալանին և սպանութեան մատնե՞լը, թէ՞ տասնեակ հայ ֆիրմաների վերջնական քայքայումն ու փակումը։

Չը կատարածների մասին գանգահարութեամբ անպարծութի՞ւնը, թէ՞ սխալ գործելակերպի շնորհիւ լոկ լռութեամբ արդարանալը։

Հայ լեզուի հիմնաքար կրթիչ նախակրթարանների փակումը, թէ՞ ուսուցչական խմբերի մանկավարժական գործում ակընյայտնի բոբիկութիւնը։

Օրօրոցից մինչև նախակրթարան, նախակրթարանից վեհարան տիրող՝ ջլատող թայֆայականութի՞ւնը, թէ՞ ազատ զգացման, մտքի և հոգու դէմ թայֆայական բռնութիւններն ու մեծ քաղաքացիներ պատրաստելու յաւակնութիւնը։

Բայց ո՞ր մէկը։

Ափսոս չէ՞

Ափսոս չէ՞ թշնամին…

Ճիշտ է, որ թշնամին գիշեր ու ցերեկ չարիք է նիւթում Մենշիկովի պէս, բայց «չիք չարիք առանց բարեաց»։ Վերցնենք հէնց գոլիցինեան օրերը։

Այդ ջնջման օրերում մեր յարգելի տիկիններն ու օրիորդները, մայրենի լեզուի բառերը ունենլիքով բռնելու համար, կարո՞ղ էին ազատվել գործակատարների կոպիտ նկատողութիւններից, նոյնիսկ փողոցում։

Իսկ մեր ուսեալ երիտասարդների մի ժողովում, ուր պէտք է քննվէր նորեկ մի մեծ հիւրի հանդիպման և շնորհաւորութեան վայելուչ եղանակը. խօմ տեսա՞ք…

Պ. Մ. Ալիբէգեանը քիչ մնաց որ զրկվէր խօսելու իրաւունքից. չը նայելով որ մայրենի լեզւում իր տկարութիւնը յայտնելով, խնդի՞րը նախապէս ներողութիւն էլ էր խնդրում. յիշում էք, չէ՞։

Ահա այսպէս մեծ է ծակ ազգասիրութեան ույժը, մանաւանդ երբ գլխիդ «իսկական հայրենասէրն» է կանգնած ջնջման ծրագրով։

Ապա այդ օրերում գիտակցութեան հրաւիրող չաքուճը—«Մուրճը» կարո՞ղ էր մեր անտարբերութեան սալի վրա փշրվել, ինչպէս անձայն փշրվեց։ Մանուկ սերնդի գեղարուեստի օգտին 25 տարվայ տոկուն ծառայութիւնից նիւթապէս և ֆիզիքապէս քայքայված յամառ խմբագրի վարձատրութիւնը լոկ հիասթափութի՞ւնը կը լինէր։ «Մշակն արժանի է վարձու» ասելու փոխարէն՝ կարո՞ղ էինք ասել «Մշակն արժանի է խոշոր դեֆիցիտի»։

Դեռ թողնենք 3 միլիոն ազգի կողմից գիտակցական կեանքի գնահատութիւնը «Մշակի» կողմից 3 հազար, «Աղբիւր-Տարազի»—3 հարիւր բաժանորդների կարօտութիւնը։ Մանաւանդ միւս հայ թերթերի այն մեծ համբերութիւնը, որ «Մոծակի» խմբագրութեան պէս չեն նախապատւում անձնասպանութիւնը… և այլն, և այլն։ Այո, այսպէս է եղել և միշտ այսպէս էլ պիտի լինի կեղծ ազգասիրութիւնը։

Իսկ եթէ Մենշիկովը կոյր կով է, հակառակն է տեսնում, և հայ ազգին լաւ ջնջելու համար ձրի «բրաունինգ» ու «մաուզերներ» չէ բաժանում, դա էլ մեր մեծ բարիքն է և բաղդաւորութիւնը։ Սուտ է, թշնամիդ էլ սուլթանի պէս քիչ հասկացող պիտի լինի։

Ներկարար

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

—

1 օգոստոսի

ԿՕՏԿԱ։ Պետերբուրգից եկաւ «Կոտպաս» նաւը այն աւազակախմբի հետ, որ կազմակերպել է երկրագործութեան վարչութիւնը Բալտիական ծովը միջազգային ծրագրով գիտա-պրօմիսլային հետազօտութեան ենթարկելու համար։ Արշաւախմբին գլուխ կանգնած է ձկնորսութեան տեսուչ դոկտոր Գրիմմը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնը առևտրի մինիստրը։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ, Կիսլօվօդսկ եկաւ առևտրի մինիստրի օգնական Կոնօվալովը և տեղում ծանօթացաւ Նարզանի կապտաժը այս աշնան հիմնաւորապէս վերանորոգելու և այլ խնդիրների հետ։

ՄԱՐԻԷՆԲԱԴ, Եկաւ Էդուարդ թագաւորը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Ի Շ Կ

Ա. Մխիթարեանց

Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլօվօդսկում, հիւրանոց «Ռոսսիա»։

(ա. օ.) 100—95

Մ Ի Ջ Ն Ա Կ Ա Ր Գ Դ Պ Ր Ո Ց Ա Ւ Ա Ր Տ
Մ Ի Փ Ո Ր Ձ Վ Ա Ծ
ՈՒՍՈՒՑԻՉ-ԽՄԲԱՊԵՏ

Դասեր է որոնում հայոց դպրոցներում բոլոր առարկաներից

Պատրաստում և կառավարում է եռաձայն խումբ եկեղեցում և դպրոցում։

Հասցէն՝ Редакція „ГЕХАРВЕСТЪ“, регенту.

(ու. շ. կ. ե.) 4 3

ՀՐԱՒԷՐ

Ալէքսանդրօպօլի Ս. Լուսաւորչի «Խրիմեան» դպրոցի (երկդասեան) հոգաբարձութիւնը հրաւիրում է ուսուցիչներ։

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեան, նախապէս ներկայացնելով պահանջված դօկումենտները։

Ս. Լուսաւորիչ եկեղեցու «Խրիմեան» դպրոցի հոգաբարձութիւն

(կ. ե.) (ապ.) 2—1

Վ ա ճ ա ռ վ ո ւ մ ե ն՝

Յովհ. Արարաջեան. «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ» պատկերազարդ. I տ.—25 կ., II տ.—30 կ. III տ.—40 կ.։

Ա. Արարաջեան. «ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», գինը 20 կ.։

Պահեստներր. կազմողի մօտ՝ Александрополь, Ов. Арабаджіану, Թիֆլիսում՝ Книж. магазинъ „Гуттенбергъ“, Բագւում՝ „Сотрудникъ“ գրավաճառանոցում, Կարսում՝ Յովսէփ Արաբեանի մօտ։ Վաճառվում են նաև Կովկասի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։

Գրավաճառներին ձեռնտու պայմաններ

(կ. ե.) 10—1

Ձուտով լոյս կը տեսնի

Հայկ Տէր-Աստուածատրեանի

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկրորդ բոլորովին փոփոխած հրատարակութիւնը, ծխ. դպր. Գ. Դ. և Ե. տարիների դասընթացը։ 60 պատկեր, Նախնի Հայաստանի քարտէզ, Նախապատմական կեանք, հասարակական կեանք, Ուրարտու, հայերի ծագումը, հայոց կրօնը, պատմութիւն մինչև մեր օրերը ստուգված և աւանդութիւններով։ Թւականներն ըստ գիտնականների։

Գինը 50 կոպէկ

Լոյս են տեսել նոյն հեղինակի ընդհանուր և հայոց պատմութ. օժանդակ ձեռնարկները՝

1. Նախապատմական կեանք—15 կ.
2. Ուրարտու և հայերի հայրենիքը—10 կ.

Դիմել գրավաճառներին կամ հեղինակին՝ Թիֆլիս, Պանասեվիչա № 1.

(հ. կ.) 2 2

Վորօնեժի նահ. Ռոսսօշ աւանում ունեմ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ

(բակալէյնի, գալանտերէյնի, երկաթեղէնի, մրգեղէնի և խմիչքեղէնի)

ԱՊՐԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵԾ ԽԱՆՈՒԹ,

որը կամենում եմ

ՎԱՃԱՌԵԼ

Ցանկացողները պայմանների մասին թող դիմեն ինձ հետեւեալ հասցէով. Слоб. Россошъ (Ворон. губ.). Михаилу Александровичу Кеворкову.

(25, յուլ. 1, 15, 29, օգ. 3) 5—5

Պահանջեցէք իսկական պտղային ջրեր

Մ. ԼԱԳԻՁԷԻ եւ **ԸՆԿ.**

կատարելագործված գործարանի

Հոտր եւ անուշահոտութիւնք զերազանց

Գործարանին կից դէկորատիվ բուսականութեամբ գեղեցիկ զարդարված տէրրասա, ուր կարելի է խմել սառոյցի նման սառը ջուր։ Գործարանը գտնվում է Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Մանթաշեանի տանը։ Տէլէֆօն գործարանի № 411։

(հ. կ.) 10—9

Լ Ի Ա Կ Ա Տ Ա Ր Բ Ժ Շ Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Լիակատար բժշկութիւն **ՍԻՖԻԼԻՍԻ** և նրա հետևանքների

Ի. Ավրախովի ԵՂԱՆԱԿՈՎ

Որպէս բժշկվել սիֆիլիսից բոլոր շրջաններում և ձևերում նրա հետևանքներից, այսինքն կաթուածներ, տաբէս, ոսկրացաւ, բծեր, վէրքեր և այլն, նոյնպէս խոցաւ և էկզեմա։

Բժշկութիւն առանց սնդիկի և եօդի անվնաս բուսական բալզամով։

Կատարեալ բժշկութիւն 2—4 շաբաթում առանց վերադարձների։ Բրօշիւրը ուղարկվում է երեք 7 կոպէկանոց մարկաներ ուղարկելուց։ Շատ կան նոտարով վաւերացրած շնորհակալութիւններ և բժիշկների վկայականներ։

Հեղինակի մօտ կարելի է ստանալ ձրի՝ С.-Петербургъ, Колокольная ул., №1 1, собств. домъ.

ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ ծախվում է միմիայն Դ. ԱՎՐԱԽՕՎԻ մօտ СПБ. Колокольная ул., № 11,

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս Ի

(հ. կ.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

11/24 օգօստոսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Crimée“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի ճաղորդակցութեան տոմսակները՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եորք եւ Շանխայ (Զինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամենայն օր, բացի կիրակի օրերից։

1—1

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

Սովորեցնում և պատրաստում են

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ծրիարար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1908 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամեն օր։ Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։

(կ. ե. հ.) 20—2

ԺԱՄԱՑՈՅՑ
KAVALIER

Ընդառաջելով գնողների ցանկութեան՝ ունենալ ճիշտ և իսկական ժամացոյց էժան գնով, մենք վճռեցինք տալ 3 ր. 95 կ.-ով տղամարդկանց բաց տափակ ժամացոյց «KAVALIER», վերջին կատարելագործութիւններով ժամացոյցային մեխանիզմի մէջ։ Կորպուսը փայլուն մուգ կապոյտ գոյնի է։ Ցիֆերբլատը մետաղական ոսկեզօծված կամ արծաթազօծված։ Սլաքների ուղղութիւնը կիւիկլայ։ Ընթացքը՝ խնամքով ստուգված, որի մասին տրվում է երաշխաւորութիւն։

Պատուէրները կատարվում են անմիջապէս պահանջը ստանալուց յետոյ։

Առաքման համար վերցվում է գնողներից
Եւրոպական Ռուսաստան 50 կոպ.
իսկ Ասիական » 75 կոպ.

Պատուէրներն ուղարկել՝ Торговому дому

Московскій Центральный Складъ Часовъ.

Москва, д. Виноградова № 126.

Յ. Գ.—Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ձրի տրվում է ժամացոյցի շղթայ տղամարդի կամ կնոջ։

(հ. կ.) 30—4

ԺԱՄԱՑՈՅՑ
և
ԱԾԵԼԻ

ԱՄԵՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ

ՈՒՂԱՐԿՈՒՄ Է 150 իրեր միայն 8 ր. 95 կ.

1) Անգլիական սև պողպատէ տղամարդկանց կամ կանանց բաց ԺԱՄԱՑՈՅՑ։ Ժամացոյցի մեխանիզմը արտասահմանեան շինուածք է և պարգևատրվել է համաշխարհային ժամացոյցի ցուցահանդէսում։ Լարվում է առանց բանալիի (ռեմօնտուարհային ժամացոյցի) ։ Ժամացոյցը բանում է րօպէ առ րօպէ, որի համար երաշխաւորութիւն է տուար)։ Ժամացոյցը բանում է... 2) Տղամարդկանց կամ կանանց նորաձև պարանոցի շղթայ. 3) Գեղեցիկ տրվում. 4) Ժամացոյցը գողացվելուց ազատ պահող գործիք. 5) Անգլիական տեսքի բրիտօկ. 6) Ածելիաման. 7) Նիկէլի փոքր թաս սապոնի համար. 8) Վրձին սապոնվելու համար. 9) Սապոնի փոշու արկղիկ. 10) Թաւշեայ շպարի արկղիկ. 11) Կարապի բմբուլից փնջիկ շպարվելու համար. 12) Ցանկացողներին ածելիի և իր պարագաների փոխարէն կարող ենք ուղարկել կանացի նորաձև բրօշկա և մի զոյգ պարիզեան գոհարազարդ ականջօղեր. 12—14) Տուալէտի արդուզարդարանք, բաղկացած հայելիից, սանրից և կօշիկներ կոճկելու կարթից. 15—19) Գարնիտուր, բաղկացած կրծքի 2 և մանժէտի 3 արտասահմանեան աշխատանքի զապօնկաներից «Մօդերն» ոճով, կամ թէ սրա փոխարէն կանանց սանրեր. 20) Ամերիկական գրպանի մկրատ. 21) Գրպանի դանակ. 22—23) Գրպանի մատիտ և 25) Պարիզեան ստեգրիչ. 24) Ճանապարհորդական գրպանի թանաքաման. 26—75) 50 լուսանկարչական գողտրիկ նկարներ ստերէօսկօպի համար. 76—100) 25 Carte postale բաց նամակներ գեղեցիկ երանգներով, որոնք կարող են մի ալբոմի զարդը դառնալ. 100—125) 25 լաւ բեռլինեան օրինակ. 126—150) 25 այդպիսի ծրար։ Բոլորի համար միայն 8 ր. 95 կ. Նոյն իրերը, խուլ ժամացոյցով—1 րուբլով թանգ, այսինքն 9 ր. 96 կ., իսկ արծաթեայ խուլ ժամացոյցով միայն 16 ր. 95 կ.։

Ինչպէս տեսնում էք, սրանից էժան չէ կարող լինել։

◆ Ուղարկվում է և վերադիր վճարով ◆

Ծրարելը ձրի։ Գործադրութիւնը օրինակելի։ Ուղարկելու համար յաւելեալ առնըվում է Եւրոպական Ռուսաստան՝ 65 կ., իսկ ասիական—95 կ.։

Լաւութեան լիակատար երաշխաւորութեամբ.

ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ ՀԱՍՑԷԱԳՐԵԼ
Московскій Центральный Складъ Часовъ

Խնդրում ենք չը խառնել վարշավեան ֆիրմաների հետ.

Москва, д. Виноградова, № 126

P. S. Փողով կամ նամականիշներով գրաւական ուղարկողներին իբրև նուէր ուղարկվում է գեղեցիկ քորոց փողպատի (գալուստիկ) համար։

36—3

(կ. չ.)

Լ Ո Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

ԻՒՐԵՎԻՔՉԻՑ ՓՈԽԱԴՐԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

1. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Ա. տարի, 2-րդ հրատարակութիւն, գզալի ճոխացրած 15 կ.
2. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Բ. տարի, 2 րդ հրատարակութիւն. յաւելուածներով ու պատկերներով 25 կ.
3. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Գ. տարի 25 կ.
4. Թւաբանական օրինակներ եւ խնդիրներ. Շապօշնիկովից ու Վալցովից փոխադր. կանոնների տեսութիւն և ընդհանուր կանոններ. 30 կ.
5. Համառօտ երկրաչափութիւն. պատկերազարդ Ա. մաս. գրոյցներ երկրաչափական մարմինների մասին 25 կ. Ա. մաս։

Թւաբանական օրինակների Ա. և Բ. տարի ձեռնարկները ընդունված և թոյլատրված են հայոց ծխական դպրոցների համար Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից։

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութը։

(ե. կ.) 6—6

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Банкская ул. № 3.